Արձանագրություն N 2

ՀԾԿՀ-23/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով էլեկտրոնային աճուրդի միջոցով ըմպելու ջրի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28 հոկտեմբերի 2022թ.
ժամը 10:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի նախագահ՝ Հայկանուշ Սաֆարյանը, անդամներ՝ Նունե Գաբրիելյանը, Արտյոմ Ղազարյանը և քարտուղար՝ Սիլվա Հարությունյանը:

Օրակարգ
ՀԾԿՀ-23/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պարզաբանման մասին

ՀԾԿՀ-23/3-ԷԱՃԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հայկանուշ Սաֆարյանը նիստը հայտարարեց բացված և ներկայացրեց տվյալ աճուրդի համար 2022 թվականի հոկտեմբերի 27-ին ստացված պարզաբանման բովանդակությունը.

1. Մենք նախատեսում ենք մասնակցել Ձեր կողմից անցկացվող մրցույթին (Ընթացակարգի ծածկագիրը՝ ՀԾԿՀ-23/3-ԷԱՃԱՊՁԲ), որի 1-ին չափաբաժնի համար Դուք սահմանել եք հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ "Խմելու ջուր, որի համար օգտագործվում է Գառնու ջրաղբյուրից ստացված ջուրը կամ համարժեքը, որն անցնում է 8 աստիճան ֆիլտրացում և մանրէազերծում: Ջուրը շշալցվում և մատակարարվում է 19 լիտրանոց պոլիկարբոնատե տարաներում: ...." Նշված տեխնիկական բնութագիրը թեև չի պարունակում ապրանքային նշանին կոնկրետ հղում, այդուհանդերձ այն համարում ենք կազմված կոնկրետ ապրանքատեսակի համար: Խնդրում ենք պարզաբանել և ներկայացնել անհրաժեշտ 8 աստիճան ֆիլտրացիայի մանրամասները, դրա նպատակահարմարությունը (աշխարհում ջուր արտադրող որևէ հեղինակավոր ընկերություն, մեզ հասանելի տվյալներով 8 աստիճան ֆիլտրացիա չի օգտագործում, եթե համարենք, որ միևնույն գործառույթ իրականացնող ֆիլտրման փուլերն աստիճան չեն համարվում), կամ տեղեկացնել, արդյոք մեր կողմից առաջարկվող ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը կհամարվի համարժեք, թե ոչ: Մեզ մոտ ֆիլտրացիայի աստիճանը չի նույնականացվում տեղադրված ֆիլտրերի քանակի հետ, այլ նույնացվում է դրանց ֆունկցիոնալ նկարագրի հետ: Ներկայացնում եմ մեր տեխնիկական բնութագիրը. «Խմելու ջուր, լրացուցիչ մաքրման փուլ անցած, ենթարկված 5 աստիճան ֆիլտրացիայի և մանրէազերծման: Շշալցված 19լ տարողությամբ պոլիկարբոնատե տարաներով, որն ունի տաք և սառը ջրի սարքին միանալու հնարավորություն:...»» Նպատակ չունենք վատաբանել որևէ մրցակից ընկերության, ուղղակի խնդրում ենք բացատրել, թե ինչու եք նախընտրում հենց 8 աստիճան ֆիլտրացիա անցած ջուր, և ոչ թե ՀՀ օրենսդրության պահանջներով շշալցվող ջուր (անկախ նրանից, թե ֆիլտրացիայի աստիճան հասկացությունն ինչպես է մեկնաբանվում):

Հանձնաժողովը ուսումնասիրեց և որոշեց տալ հետևյալ պարզաբանումը.

1. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

Միաժամանակ նշենք, որ հրավերում կատարվել է փոփոխություն և տեխնիկական բնութագրում «8 աստիճան ֆիլտրացում և մանրէազերծում» բառերից հետո ավելացվել է «կամ համապատասխանում է ISO 22000 ստանդարտի պահանջներին» բառերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Հայկանուշ Սաֆարյան

անդամներ _____ Նունե Գաբրիելյան

_____ Արտյոմ Ղազարյան

քարտուղար _____ Սիլվա Հարությունյան